Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 683 - Ա
որոշման

«ՋՐԱՏԱՔԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Սոցիալական պայմանների բարելավման և էներգախնայողությունն ապահովելու նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի՝ Տեղ և Կոռնիձոր բնակավայրերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի՝ Վարդենիս քաղաքում բնակվող Լեռնային Ղարաբաղից տեղահանված ու այդ բնակավայրերում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքների տների տանիքներին անհատույց արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք՝ Տեղ և Կոռնիձոր բնակավայրեր, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի՝ Վարդենիս քաղաք, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	9,600,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի՝ Տեղ և Կոռնիձոր բնակավայրերում բնակվող Լեռնային Ղարաբաղից տեղահանված թվով 13 ընտանիք և այդ բնակավայրերում բնակվող սոցիալապես անապահով թվով 5 ընտանիք ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի՝ Վարդենիս քաղաքում բնակվող Լեռնային Ղարաբաղից տեղահանված թվով 4

		ընտանիք և այդ բնակավայրերում բնակվող սոցիալապես անապահով թվով 2 ընտանիք:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի հոկտեմբերի 16-ից մինչև 2026 թվականի փետրվարի 27-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի՝ Տեղ և Կոռնիձոր բնակավայրերում բնակվող Լեռնային Ղարաբաղից տեղահանված թվով 13 ընտանիքների և այդ բնակավայրերում բնակվող սոցիալապես անապահով թվով 5 ընտանիքների ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի՝ Վարդենիս քաղաքում բնակվող Լեռնային Ղարաբաղից տեղահանված թվով 4 ընտանիքների և այդ բնակավայրերում բնակվող սոցիալապես անապահով թվով 2 ընտանիքների տների տանիքիներին արևային ոչ ճնշումային թերմոսիֆոնային ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրում: Նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հոկտեմբերի 16-ից մինչև 2026 թվականի փետրվարի 27-ն ընկած ժամանակահատվածում՝ 9,600,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Բնակիչների տան տանիքների ամրակցման, ջրատաքացուցիչ կայանների ոտնակների և ջրատաքացուցիչների տեղադրման, էլեկտրամալուխների անցկացման և մալուխների միացման, ջրամատակարարման խողովակների անցկացման և ջրատաքացուցիչ կայաններին միացման աշխատանքների իրականացում՝ 9,600,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի և Տեղի ու Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի համայնքապետարաններ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

21.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ